

«ԵՍ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԵՄ ԾՆԻՈՒՄ», ասում է Վարդան Յովհաննիսեանը

Ապրիլի 30ին տանկային շարասիները եւ զրահապատ մեքենաները ՕՄՕՆականների հետ մուտան Գետաշէն: Գիւղի կենտրոնում ՕՄՕՆականները շրջապատեցին մօտ 300 կանանց եւ երեխաների: Այդ ընթացքում մի զրահամեքենայի շարժիչը փչացաւ ճանապարհին եւ Թաքուլը մօտեցաւ զրահամեքենայի հրամանատարին, ֆաշելով ձեռքին եղած նոնակի ապահովիչը ասաց, որ եթէ հենց հիմա ՕՄՕՆականներին հրաման չտրուի հեռանալ գիւղից, ապա կը պայթեցնի եւ զրահամեքենան եւ իրեն: Մօտ 15 րոպէ լարուած վիճակ էր: Մնացածը ձեզ յայտնի է:

Գիւղը պահում էր Թաքուլը, եւ նրա մահից յետոյ Գետաշէնը որք մնաց: Բարեբախտաբար զինւորականների թողած մեքենայի մէջ ռադիոկապ կար, եւ մենք կապուեցինք զինուորականների հետ: Այնուհետեւ պատանդ վերցրած 14 զինուորականներին փոխեցինք 27 հայ զերիների հետ, որոնց ՕՄՕՆականները գազանաբար ձեռնէին եւ ստիպել էին ըստօրագրել, որ իբր խնդրում են իրենց տեղափոխել Հայաստան: Աւելի ուշ սկսուեցին բանակցութիւններ գիւղից բնակչութեան տեղափոխման համար: Առաջարկում էին ժողովրդին հանրակառքերով տեղափոխել Կիրովաբադ եւ այնտեղից Հայաստան, կամ տանել Ղազախ եւ յետոյ՝ Հայաստան: Մենք հրաժարուում էինք, եւ նրանք սկսեցին ամեն գիշեր կրակել գիւղի վրայ, դրանով հոգեբանական ճնշում գործադրելով: Ժողովուրդն ըստիպուած համաձայնեց նաեւ զինւորական ուղղաթիռներով թռչել: Զինուորականները ուղղաթիռները բերեցին գիւղի ծայրը եւ ասում էին, որ պիտի տեղափոխեն Ստեփանակերտ: Քանի որ ուղղաթիռները գիւղից հեռու էին կտնգնում, մենք չէինք կարողանում իմանալ, թէ գնացողները ուղղաթիռն են

նստում, թէ՛ նրանց տանում են այլ ուղղութեամբ: Ուղղաթիռների մօտ կանգնած էին ՕՄՕՆը, զօրերը, Պետական Անվտանգութեան Կոմիտէի աշխատակիցները: ՊԱԿը սպասում էր Իգոր Մուրադեանին, որ արդէն Գետաշէնում էր գտնուում եւ մասնակցում էր բանակցութիւններին, ինձ: Տեղափոխման ժամանակ ձերբակալեցին բժիշկներին եւ տարան Կիրովաբադ, ուր նրանք սարսափելի պայմաններում էին ապրում: Ձերբակալեցին նաեւ մի քանի տղամարդկանց: Ուղղաթիռ նստողներին ստիպում էին գրել, թէ իբր խնդրում են իրենց տեղափոխել Հայաստան: Ինձ ձերբակալեցին Մայիսի 6ին: Այդ ընթացքում ինքնապաշտպանութեան հիմնական ուժերը արդէն լեռներով եւ անտառներով հեռացել էին դէպի Հայաստան եւ Շահումեան: Մայիսի 6ին կանայք եւ երեխաները արդէն գիւղում չէին եւ տղաներից էլ էջերն էին մնացել: Մենք պատրաստուում էինք լեռներով հեռանալ, որովհետեւ շատերիս գիտէին: Այդ օրը զօրքը նորից մտաւ գիւղ: Ես, որպէսզի իմանամ, թէ ինչ է կատարուում գիւղում, գնացի դէպի զօրքը եւ այնտեղ ինձ ձերբակալեցին: Յետոյ ինձ յանձնեցին բուրքերին: Փաստաթղթերս ստուգելուց յետոյ տեղափոխեցին Կիրովաբադ: Կիրովաբադում 20 օր պահում էին նախնական կալանավայրում: Համեմատաբար ուրիշներին, որոնք գտնուում էին բանտում, ինձ համար աւելի հեշտ էր: Ինձ ասում էին, որ դու անյայտ կորած ես, եւ պիտի ասես այն, ինչ որ մենք ենք ուզում: Առաջին 5 օրը հարցաճննութիւնները վարում էր ադրբեջանական ՊԱԿի ազգութեամբ ռուս մի աշխատակից: Ինձնից պահանջում էին ստորագրել մի թուղթ, որ ես կը համագործակցեմ իրենց հետ: Ինձ առաջարկում էին հանդէս գալ հեռուստատեսութեամբ, փրկնադատել ֆիդայիներին, ասել, թէ

ինձ հետ լաւ են վարում: Երբ ես հրաժարուեցի, ինձնից հարցազրոյց վերցրեցին: Հարցը հետետալն էր. արդեօք քեզ շահ են ձեռնում: Ես պատասխանեցի, որ շատ չեն ձեռնում: Դրանից յետոյ սկսեցին, իհարկէ ձեռնել: 20 օր ես մեկնակ էի եւ հետս մի ռուս կար ձերբակալուած: 20 օր յետոյ ինձ տեղափոխեցին բանտ, սակայն առանձին էին պահում: Բանտում էին Ոսկեպարում ձերբակալուած հայ միլիցիոներները եւ եւս 12 ուրիշներ: Բանտում վիճակը խիստ ծանր էր, որովհետեւ առաջին օրերը շատ էին ձեռնում: Ծեռում էին հիմնականում մահակներով: Վերջին 20 օրերին, արտասահմանից եւ Հայաստանի կողմից կատարուող ճնշումների շնորհիւ ձեռն արդէն պարբերական չէր: Մեր վիճակը մի էիչ քեքեւացաւ: Բոլոր ձերբակալուածներին մեզադրում էին որպէս փրկական յանցագործներ, թէ եւ բոլորն ազնիւ գիւղացիներ էին եւ ոչինչ չէին արել: Ձերբակալութեան ամբողջ ընթացքում ես գտնուում էի տեղեկատուական շրջափակման մէջ: Ինձ ասում էին, թէ ինչ ուզեն, կը գրեն, երբ ուզեն դատավարութիւն կ'անեն, որ ընդմիջտ կը մնամ Ադրբեջանում: Ինձ մեղադրում էին զրոհայիներին օգնելու, ազգամիջեան թշնամանք հրահրելու, ադրբեջանցու սպանութեան եւ էլի ուրիշ բաների մէջ: Ինձ բաց թողեցին ձեւակերպելով, թէ փոխում են խափանման միջոցը եւ առաջարկեցին ստորագրել, որ կանչի դէպքում ես անպայման կը ներկայանամ իրենց: Կիրովաբադից ինձ տեղափոխեցին Ղազախ եւ, չէզոք տարածքում, ինձ յանձնեցին մեր իշխանութիւններին: Միշտ ազատուելու յոյս ունէի, բայց դժուար եմ հաւատում, որ արդէն Հայաստանում եմ: Ինչ վերաբերում է հայ բանտարկեալներին, ապա պէտք է միշտ ճնշումը պահել: Հակառակ դէպքում ամեն ինչ հնարաւոր է: